ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ. Կյանքի դասերը (հուշեր). ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2000, 266 էջ:

Հայաստանի Երկրորդ Հանրապետության գրեթե տարեկից ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը հրատարակել է «Կյանքի դասերը» հուշերի գիրքը, որը մի ամբողջ սերնդի կենսագրություն հանդիսանալով, ճանաչողական արժեքներով կարևոր դասեր է պարունակում ինչպես արդի ժամանակաշրջանի, այնպես էլ ապագայի համար:

Իր կյանքի 78 տարիների ընթացքում հայ ժողովրդի արժանավոր զավակը անցել է դժվարին, սակայն փառավոր ուղի: Գիրքը սկսվում է հայոց պատմության ողբերգական էջերով: Հեղինակը գրում է. «Ծնողներս թուրքական դաժան կոտորածների հետևանքով կորցնելով ամեն ինչ, թողնելով տուն ու տեղ և նախնիների ու հարազատների թանկ շիրիմները, 1918 թվականին գաղթել են Նախիջևանի գավառի Կզնուտ գյուղից: Դա եղել է հայկական հնագույն բնակավայրերից մեկը, որն ունեցել է 250 շեն ու բազմամարդ տուն, պատմական հուշարձաններ, որոնց մեջ առանձնապես նշանակալից է եղել Ս.Աստվածածին եկեղեցին» (էջ 7):

Այո, ցեղասպանությունից մազապուրծ Սարգսյանների ընտանիքը հայտնվում է ծանր վիճակում: Հալածվելով թուրքական հրոսակախմբերից, դժվարանցանելի սարերով ու ձորերով, տառապանքներով ու զրկանքներով հասնում է Երևան, որտեղ էլ ծնվում է ապագա գիտնականն ու պետական գործիչը: Պատմությունից լավ հայտնի է, թե ինչպիսի ծանր վիճակում էր գտնվում Երևանը նախախորհրդային տարիներին: Քաղաքում կուտակված էին ցեղասպանության սարսափներն ապրած «ողբի ու որբի» երկրի ամենատարբեր գավառներից բազմաթիվ գաղթականներ: Սովահարությունը առօրյա, սովորական երևույթ է եղել քաղաքում: Տասնյակ հազարներով են հաշվվել սովից ու հիվանդություններից մահացածները:

Գրքում պատկերավոր ձևով ներկայացվում է նոր կյանքը, խորհրդային սոցիալիստական կարգը Հայաստանում և մասնավորապես Երևանում: Հեղինակը գրում է. «Նոր կյանքը կարգախոս չէր միայն: ... Այստեղ ու այնտեղ բարձրանում էին նորակառույցները, որոնք մի առանձին ուշադրության էին արժանանում հին ու նոր երևանցիների և քաղաքի հյուրերի կողմից: Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը իր անշուք արվեստանոցում թղթին էր հանձնում Երևանի առաջին հատակագիծը և, Զարենցի խոսքերով ասած, «տեսնում էր երևի արևային մի քաղաք»: Դա բոլորինն էր, և շատերը արդեն իրենց երազանքներում ելել էին իրենց մթին ու խոնավ խուցերից և ապրում էին ապագայի տուֆակերտ քաղաքում» (էջ 14):

Հետաքրքրություն է ներկայացնում Ֆադեյ Սարգսյանի ուսումնառության ուղին: 1930թ. ընդունվում է Երևանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան միջնակարգ գպրոցը և սկզբից ևեթ աչքի է ընկնում աշխատասիրությամբ ու ընդունակություններով: 1938թ. դպրոցի մանկավարժական կոլեկտիվը որոշում է նրան ուղարկել Մոսկվա՝ գերազանցիկների համամիութենական հավաքին մասնակցելու համար: 1940թ. ընդունվում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը: Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, նա ավարտում է միայն առաջին կուրսը: Պատերազմի պայմաններում անհ-

բաժեշտություն կար զինվորական կապի մասնագետներ պատրաստել և դրա համար ուսանողներ էին հավաքագրում: Այդ նպատակով Ցագեյ Սարգսյանը ուսանում է Լենինգրադի զինվորական կապի էլեկտրատեխնիկական ակադեմիայում, որն այն ժամանակ տեղափոխվել էր Տոմսկ: 1943թ. նա ավարտում է այդ դասընթացները, ստանում կրտսեր տեխնիկ-լեյտենանտի կոչում և հուլիսին մեկնում է ռազմաճակատ ու մասնակցում մարտական գործողություններին:

Որոշ ժամանակ անց նա շարունակում է ուսումը Լենինգրադի ռազմական ակադեմիայում, որը հաջողությամբ ավարտելուց հետո ծառայության է անցնում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության հրետանային գլխավոր վարչությունում: Այնտեղ նա ընդգրկվում է այն խմբում, որը զբաղվում էր միանգամայն նոր սպառազինությունների ստեղծմամբ: Այդ պատասխանատու աշխատանքով նա զբաղվում է շուրջ 13 տարի: Մասնագետների խումբը ստեղծում է նոր տեխնիկա, որի փորձարկման հիման վրա հեղինակները, նրանց թվում Ցագեյ Սարգսյանը, ներկայացվում են միութենական կառավարական մրցանակի և արժանանում են այդ պարգևին:

1952թ. նա գործուղվում է Չինաստան՝ որպես այդ մեծ երկրի բանակի հակաօդային պաշտպանության խորհրդատու՝ օգնելու չինական բանակին ռադիոլոկացիոն տեխնիկայի օգտագործման գործում Հարավային Կորեայի հետ պատերազմի ժամանակ: Մարտական ծառայությունների համար նա պարգևներ է ստանում Չինաստանի կառավարությունից: Երկու տարի նա աշխատել է ԽՍՀՄ-ում ռադիոլոկացիոն տեխնիկայի արտադրության ամենախոշոր կենտրոն հանդիսացող Սվերդլովսկում:

Երբ Երևանում հիմնվում է մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, Ցագեյ Սարգսյանը վճռականորեն որոշում է իր գիտելիքներն ու կուտակած փորձը օգտագործել հայրենի քաղաքում: 1959թ. տեղափոխվում է Երևան և իր այդ քայլին տալիս է հետևյալ հիմնավորումը. «Ես միշտ մտածել եմ, որ մարդը պետք է ապրի իր հայրենիքում. ինչպես էլ ապրես, ավելի քաղցր է, քան հայրենիքից դուրս, և այդ զգացմունքը տարիների ընթացքում ավելի է սրվում, թեև ես միշտ էլ Խորհրդային Միությունը համարել եմ իմ մեծ հայրենիքը» (էջ 41):

Սկզբում, 1959 թվականից, որպես ԽՍՀՄ պաշտպանության նախարարության հրթիռահրետանային գլխավոր վարչության ավագ զինվորական ներկայացուցիչ, աշխատում է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, որի տնօրենը ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանն էր: 1963թ. Ցագեյ Սարգսյանը նշանակվում է ինստիտուտի տնօրեն: Այդ հաստատությունում դրսևորվում են Ցագեյ Սարգսյանի գիտական, ինժեներական, շինարարական փայլուն ունակությունները: Կառուցվեցին ինստիտուտի նոր մասնաշենքերը: Կյանքի մեջ մտավ հայրենասիրական նոր ավանդույթ, որով կոլեկտիվի յուրաքանչյուր աշխատակից շաբաթվա մեջ մի օր պետք է աշխատեր շինարարությունում: Բոլոր շինությունների ներքին հարդարման աշխատանքները կատարում էին ինստիտուտի աշխատողները: Գրքի հեղինակը անկեղծությամբ ու հպարտությամբ գրում է. «Պետք է նշեմ, որ ես ավելի աշխատանքին նվիրված, երիտասարդ, բայց մեծ ունակություններով օժտված կոլեկտիվ չեմ տեսել, և իմ կյանքի լավագույն տարիները եղել են այդ կոլեկտիվի հետ աշխատելու տարիները» (էջ 47):

Նա երախտագիտությամբ ընդգծում է Հանրապետության այն ժամանակվա առաջին գեմքերի ամենալուրջ վերաբերմունքը ինստիտուտի նկատմամբ: Նա գրում է. «Թե՛ Անտոն Քոչինյանը, թե՛ Յակով Զարոբյանը ինստիտուտը համարում էին երկրի կարևորագույն օբյեկտը, և չէր լինում որևէ հարց, որ նրանք պատրաստակամությամբ չլուծեին» (էջ 47–48): Արդյունքը ե-

ղավ այն, որ ինստիտուտը դարձավ Հանրապետության ռադիոէլեկտրոնիկայի բնագավառի զարգացման կենտրոն: Ավելին, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ստեղծման բնագավառում, ամբողջ ԽՍՀՄ-ում, ինստիտուտը գրավեց առաջնային տեղ: Նույնիսկ ամերիկյան մասնագետները «Նաիրին» համարում էին այն ժամանակվա շատ հետաքրքիր, ինքնատիպ էլեկտրոնային հաշվիչ մեքենա:

Հանրաճանաչ իրողություն է այն, որ Ցադեյ Սարգսյանի ղեկավարությամբ ինստիտուտի կոլեկտիվը կարողացավ իրագործել մեծ աշխատանքներ երկրի պաշտպանության ասպարեզում ավտոմատացված կարևոր համակարգերի, արտադրությունների, տրանսպորտի ղեկավարման և ինֆորմացիայի այլ ճյուղերի ստեղծման ուղղությամբ, կազմակերպել Լուսնի վրա թռիչք ղեկավարող ռադիոսարքի արտադրություն: Դա իսկական հայրենասիրություն էր ինստիտուտի ողջ կոլեկտիվի կողմից:

Հատկանշական է, որ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի հիմքի վրա ստեղծվեցին այնպիսի նորագույն արտադրություններ, ինչպիսիք են «Էլեկտրոն» արտադրական միավորումը, «Մարս» գիտաարտադրական միավորումը, որն այն ժամանակ խոշորագույնն ու լավագույնն էր Եվրոպայում, «Պոզիստոր» արտադրական միավորումը՝ «Բազալտ» և «Իմպուլս» գործարաններով, և այլ հաստատություններ:

18 տարի աշխատելով Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, 1977 թվականից նա ստանձնում է Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնը:

Այդ պատասխանատու աշխատանքի հիմքում դրված էր 1975թ. ապրիլի 16-ի ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության հետագա զարգացման ծրագիրը: Հիրավի, ժողովրդական տնտեսության և ժողովրդի սոցիալական վիճակի շեշտակի վերելքի այդ վիթխարի ծրագրով նախատեսվում էր.

- արդյունաբերության զարգացում դեպի սակավ մետաղատար և քիչ էներգատար մեքենաշինություն՝ ռադիոէլեկտրոնիկա, ճշգրիտ մեքենաշինություն և սարքաշինություն, նոր աշխատատեղերի ստեղծում, ժողովրդի բարեկեցությունը ապահովող նոր արդյունաբերական ոլորտների ծավալում,

- գյուղատնտեսության զարգացում նկատի ունենալով սակավահող և ջրի մեծ պակաս ունեցող հողերի ռացիոնալ օգտագործումը,

- մի շարք կարևորագույն և բնապահպանության կողմից վտանգ պարունակող խոշոր արդյունաբերական օբյեկտների վերակառուցում, վերազինում և բնապահպանության բարելավման արմատական հարցեր,

- լեռնային և նախալեռնային շրջանների ժողովրդական տնտեսության ռացիոնալ զարգացում,

- սոցիալական ոլորտի հիմնարար բարեփոխումներ, խոշոր կառույցներ և շատ այլ խնդիրներ:

Հանրապետության սոցիալ-տնտեսական այդ հոյակապ ծրագիրը հաջողությամբ իրականացվում էր: Հայաստանը թողարկում էր շուրջ 10 միլիարդ ռուբլի արժողությամբ արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանք և ստանում էր սլանային ու արտապլանային մեծ եկամուտներ, ինչը թույլ էր տալիս լուծել սոցիալական խոշոր հիմնահարցեր: Այդ ամենի հիման վրա Ցադեյ Սարգսյանը հպարտությամբ և իրավամբ գրում է. «... մեր լեզուն երկար էր: 1987 թվականին մենք հասանք այն բանին, որ 1.200 մլն գերպլանային շահույթ ունեցանք և ազատորեն կարող էինք անցնել ինքնաֆինանսավորման, որի համար էլ հարց դրեցինք ԽՍՀՄ Նախարարների խորհրդի առջև. համոզված

էինք, որ այն կլուծվի, և դրա հետևանքով մենք կունենանք մեծ չափերով ազատ միջոցներ» (էջ 81-82):

Ցագեյ Սարգսյանը հստակ պատասխան է տալիս այն հերյուրանքին, թե խորհրդային տարիներին Հայաստանի բոլոր հանքային հարստությունները արտահանվում էին Ռուսաստան և այլ հանրապետություններ: Նա հավաստի տվյալներ է բերում, օրինակ, որ հանրապետությունում արտադրվող ամբողջ պղինձը (40 հազար տոննա) օգտագործվում էր տեղում կաբելների արտադրության մեջ, ինչպես նաև ռադիոէլեկտրոնիկայի, էլեկտրատեխնիկական և այլ ճյուղերում: Դրա հետ միաժամանակ մոտ 50 հազար տոննա պղինձ բերվում էր այլ հանրապետություններից: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ քսան անգամ ավելի շատ ոսկի էր բերվում մյուս հանրապետություններից, քան արտադրվում էր Հայաստանում: Ներմուծված ոսկին օգտագործվում էր էլեկտրոնային զանազան արտադրատեսակների համար: Անչափ կարևոր էր այն հանգամանքը, որ բացառությամբ սանիտարական հատումից, հանրապետությունում արգելված էր անտառահատումը: Հայաստանի արդյունաբերությունը, որպես կանոն, վերջնական արտադրանք էր տալիս և այդ իմաստով էլ խորհրդային կոոպերացիան ամենաօգտակարն էր մեր հանրապետության համար:

Հեղինակը գրքում ներկայացնում է հանրապետության այնպիսի կարևոր կառույցներ, ինչպիսիք են մետրոպոլիտենը, Մասիս–Նուռնուս, Իջևան–Հրազդան երկաթգծերը, Արփա–Ապան, Որոտան–Արփա ջրուղիները, մարզահամերգային համալիրը, նոր խոշոր ջրամբարները, ջրմուղ կայանները, ավտոմոբիլային ճանապարհները, դաշամուղները, բնակելի տները, դպրոցները, մանկապարտեզները, մշակույթի, առողջապահության օջախները և այլն:

Բացի այդ ամենից, հարկ է ասել, որ Հայաստանի կառավարության ղեկավար Ցագեյ Սարգսյանը վճռական գեր է կատարել Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի վերապրոֆիլավորման միջոցով կանխելու տարեկան 12 հազար տոննա վնասակար միացությունների արտանետումը մթնոլորտ և 100 հազար տոննա ալկալիներով ու թթուներով աղտոտված հոսքը Մարմարիկ գետը: Դրա հետ միաժամանակ ստեղծվեց «Հրազդանմեքենա» հսկա գործարանը, որը կարող էր ապահովել 20 հազար աշխատատեղ և միաժամանակ հնարավորություն էր տալիս էկոլոգիապես պահպանել երեխաների հանգստի լավագույն վայրերից մեկը: Ընդհանուր առմամբ մեծ են Ցագեյ Սարգսյանի ծառայությունները հանրապետության շրջակա միջավայրի պահպանության գործում: Այդ նպատակով վերակառուցվեց Քանաքեռի ալյումինի գործարանը և այն «անցավ ալյումինի ֆոլգայի արտադրության, առանց վնասակար արտանետումների: Դա մեծ հաղթանակ էր» (էջ 109):

Հանրապետության արդյունաբերության վերակառուցման և զարգացման գործում բոլոր նախաձեռնություններն ու լուծումները Ցագեյ Սարգսյանը իրականացնում էր այն ժամանակվա ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հետ: Նրանց համատեղ ջանքերով լուծվեց Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի վերակառուցման խնդիրը: Երկուսի համառ ջանքերով ԽՍՀՄ կառավարության կողմից որոշում ընդունվեց այդ կոմբինատի արտադրությունը կատարելագործելու մասին, որով ապահովվում էր շրջակա միջավայրի արմատական բարելավումը: Ձեռնարկված միջոցառումները հնարավորություն տվեցին ավելի քան երեք անգամ պակասեցնել աղտոտող նյութերի արտանետումը քաղաքի մթնոլորտ և կանխել տարեկան 1300 տոննա թունավոր նյութեր Դեբեդ գետը լցնելը: Շատ կարևոր էր 1988 թվականի նոյեմբերին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի ընդունած որոշումը 1990 թվականի հունվարի 1-ից գործարանը վերակառուցելու մասին: «Սակայն,– գրում

է գրքի հեղինակը,– 1989 թվականի կեսերին, չսպասելով այդ որոշման կատարմանը, քաղաքային իշխանությունները որոշեցին կոմբինատը փակել» (էջ 113): Ֆադեյ Սարգսյանը այդ չմտածված քայլը համարում է անթույլատրելի սխալ:

Հուշերում ցույց են տրված այն կոնկրետ քայլերը, որոնք կատարվել են Կիրովականի քիմիական կոմբինատի, «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման վերակառուցման և բնապահպանության ասպարեզում: Հանգամանորեն լուսաբանված են Սևանի հիմնախնդրի հետ կապված հարցերը և դրանց լուծման ուղղությամբ Ֆադեյ Սարգսյանի կատարած աշխատանքները:

ՀՀ կառավարության նախկին ղեկավարի, պետական ու քաղաքական նշանավոր գործչի, գիտնականի հուշերում զետեղված են էներգետիկայի և վառելանյութի հիմնախնդիրների լուծման ասպարեզում ոչ միայն իր ծառայությունները, այլ նաև սեփական նախաձեռնությունները: Նա մեծ ջանքեր է գործադրել, որպեսզի Հայաստանում կառուցվեր հիդրոկուտակիչ էլեկտրակայան (ՀԷԿ): Նա հիմնավորել է, որ այդպիսի էլեկտրակայանը բնապահպանական տեսակետից բացարձակապես անվնաս է, դրա կառուցումն ու գործարկումը հնարավորության կտար տարեկան խնայել 500 միլիոն խորանարդ մետր Սևանի ջուր, հրաժարվել ավելի քան 10 հազար ցիստեռն մազութի ներկրումից, որի այրումը կհանգեցներ տասնյակ հազարավոր տոննա թունավոր նյութերի արտանետումները մթնոլորտ: Ցավով պետք է ասել, ինչպես դրում է գրքի հեղինակը, առանձին անհատներ մամուլում հանդես եկան հիդրոկուտակիչ էլեկտրակայանի դեմ, որը զենք գարձավ հակառակորդների ձեռքին: Շատ ափսոս, որ այդ հիանալի նախագիծը ձախողվեց, չիրագործվեց (էջ 140-143):

Ինչ վերաբերում է հայկական ատոմակայանի ճակատագրին, ապա գրքի հեղինակը պարզ, հստակ ու համարձակորեն գրում է. «Սկզբունքորեն ատոմակայանն, անկասկած, պետք էր փակել: Բայց անհասկանալի էր, թե վառելանյութի մատակարարման նույնիսկ այն ժամանակվա տանելի պայմաններում ինչպե՞ս կարելի էր միանգամից փակել ՀԱԷԿ-ի երկու բլոկները՝ առանց շահագործման հանձնելու Հրազդանի ՊՇԷԿ-ի թեկուզ մի բլոկը» (էջ 152):

Հեղինակի հուշերում կարևոր տեղ է հատկացված արցախյան շարժման հիմնահարցերին: Հիշեցնենք, որ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 4-ի նիստում, որին մասնակցում էին Ստալինը, Օրջոնիկիձեն, Մախարաձեն, Նարիմանովը, Կիրովը, Նազարեթյանը, Մյասնիկյանը, Օրեխելաշվիլին, Ֆիգատները, քննարկվում և քվեարկության է դրվում Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու հարցը: Կողմ են քվեարկում Նարիմանովը, Մախարաձեն և Նազարեթյանը: Դեմ են քվեարկում Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Կիրովը և Ֆիդատները: Քանի որ այդ առաջարկությունը չի անցնում, քվեարկության է դրվում Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմում ներառելու հարցը, որին կողմ են քվեարկում Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Կիրովը և Ֆիդատները: Դրա հիման վրա որոշում է ընդունվում Լեռնային Ղարաբաղը ներառել Հայաստանի ԽՍՀ կազմում: Հարկ է ասել, որ Օրեխելաշվիլին բացակայել է քվեարկության ժամանակ, իսկ Ստալինը չի մասնակցել քվեարկություններին և նիստին ներկա է եղել որպես ՌԿ(Բ)Կ Կենտկոմի անդամ: Ցավոք, ընդունված որոշումը չի իրագործվում, քանի որ Ստալինը և Նարիմանովը հասնում են այն բանին, որ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի, այսինքն կենտրոնի համաձայնությամբ, «դեմոկրատական ցենտրալիզմի» հիման վրա հուլիսի 5-ին Կովկասյան բյուրոն չեղյալ է համարում նախորդ օրվա որոշումը և նոր որոշում է ընդունում, որով Լեռնային Ղարաբաղը թողնվում է Ադրբեջանի կազմում:

Այդ չարաբաստիկ ու ճակատագրական սխալի պատճառով Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծումը ձգձգվեց տասնամյակներ:

Հանդիսանալով արցախյան հիմնահարցի արդարացի լուծմանը նպատակամղված շարժման ակտիվ գործիչներից մեկը, Ցագեյ Սարգսյանը իր հուշերում հանգամանորեն լուսաբանել է իրադարձությունների ամբողջ ընթացքը: Նա դրում է, որ Բաքվում, Կիրովաբադում, Սումգայիթում և Ադրբեջանի հայաբնակ այլ վայրերում տեղի ունեցած ողբերգական դեպքերը ցույց էին տալիս, որ «ադրբեջանցիները նոր ցեղասպանություն էին կազմակերպել» (էջ 195): Հայտնի է, որ արդեն 1989 թվականի հունվարին Ադրբեջանից Հայաստան եկած հայ փախստականների թիվը կազմել էր 191 հազար, իսկ Հայաստանից Ադրբեջան դնացած ադրբեջանցիների թիվը՝ 147 հազար 700:

Գրքի հեղինակը կարեոր տեղ է հատկացրել մեծ ադետին՝ 1988 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժին: Լինելով արտասահմանյան օգնությունները կազմակերպելու և երկրաշարժի հետևանքները վերացնելու շտաբի պետ, նա օր ու գիշեր աշխատել է այդ ասպարեզում:

Գրքում ըստ արժանվույն դնահատված է ԽՍՀՄ կառավարության ղեկավար Նիկոլայ Ռիժկովի անձնուրաց աշխատանքը երկրաշարժի հետևանքները վերացնելու ուղղությամբ, հայ ժողովրդի նկատմամբ նրա ցուցաբերած մեծագույն հարգանքն ու կատարած գործերը: Նա դրում է. «Ն.Ռիժկովի գործունեությունը հիացմունք էր հարուցում: Ես միշտ մտածում էի, որ հայ ժողովուրդը պետք է նրան արձան կանդնեցնի և հավերժ հիշի: Եվ հայ ժողովուրդը պարտքի տակ չմնաց: Ադետի դոտում արդեն կանգնեցվել է Ն.Ի. Ռիժկովի կիսանդրին: Զուր չի ասված, թե «պտուղը ծառից հեռու չի ընկնում». այդ օրերին Նիկոլայ Իվանովիչի փոքրիկ թոռնիկը հեծանիվի համար կոպեկ-կոպեկ հավաքած 5–6 ռուբլին դժվարությամբ (խնայդրամարկղում մինչև չէին իմացել, թե ի՞նչ նպատակի համար է՝ չէին ընդունել) ուղարկել էր հայ ադետյալներին օգնության: Որքա՞ն թանկ են մեզ համար նման օգնությունները» (էջ 233):

Հուշերի հեղինակը միևնույն ժամանակ մատնանշում է, որ «երբ մեզ օգնություն էին ուղարկում համարյա բոլոր հանրապետությունները, ժամանած մարդիկ իրենց կառավարությունների պատասխանատու պաշտոնյաների գլխավորությամբ աշխատում էին առանց հատուցման, այդ նույն ժամանակ մեր որոշ շինարարներ և օժանդակ ծառայությունների աշխատակիցներ ենթարկվում էին սադրանքների և հաճախ գործադուլ էին հայտարարում: Եթե այդ հանգամանքը չլիներ, կիրականացվեին շատ ավելի մեծ շինարարական աշխատանքներ, շատ ու շատ անգամ ավելին կարվեր, ընդ որում ոչ միայն մեր սեփական միջոցների հաշվին: Մենք ինքներս մեզ պատժեցինք մեր անհեռատեսությամբ, թեև մտածում էինք անկախություն ձեռք բերելու մասին: Եթե այն ժամանակ օգտագործած լինեինք բոլոր հնարավորությունները, ինչքա՜ն մարգիկ ժամանակավոր տնակների և վրանների փոխարեն կապրեին բնակարաններում» (էջ 239):

Կառավարության ղեկավարի աշխատանքը թողնելուց հետո ակադեմիկոս Ցագեյ Սարգսյանը գլխավորում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան: Մեր դժնդակ ժամանակներում, երբ ավելի քան 10 տարի է, ինչ Գիտությունների ազգային ակադեմիան, ամբողջ Հանրապետության գիտությունը հայտնվել են քայքայման եզրին, հայրենասեր գիտնականն ու պետական գործիչը իր բոլոր ջանքերը գործադրում է, որպեսզի հայ ժողովուրդը չկորցնի դարերով վաստակած և իր սրտին շատ մոտ հաստատությունները՝ Գիտությունների ակադեմիան, ճյուղային ինստիտուտները և բուհական գիտական համակարգը:

Ուշադիր ընթերցելով Ֆադեյ Սարգսյանի «Կյանքի դասերը» հուշերի դիրքը, հարկ եմ համարում առանձնացել և ընդգծել նրա կյանքի ու գործունեության հիման վրա կատարված այնպիսի հետևություններ, դասեր, որոնք անհրաժեշտ են մեր ժամանակի և ապագա սերունդների համար:

Անհերքելի փաստ է, որ խորհրդային ժամանակաշրջանում, 70 տարում, Հայաստանի բնակչությունն ավելացավ հինգ անգամ: Վարչական միջոցներով խորհրդային իշխանության վերացմամբ ու կապիտալիզմի ներդրմամբ Հայաստանի բնակչությունը հայտնվեց ողբերգական վիճակում: Դա արտահայտվում է աննախադեպ արտագաղթի, բնակչության մեծամասնության ծայրահեղ աղքատության, զանգվածային գործազրկության մեջ: Պետության կողմից գրեթե վերացվել է անվճար բուժումը, իսկ պետական բուհերում սկսել է գերազանցել վճարովի ուսուցումը: Այս ամենի պատճառն այն է, որ սեփականության ձևերի մեջ պետական սեփականությունը գերակայություն չունի: Ըստ իս, մյուս կարևոր դասն այն է, որ արդի աշխարհաքաղաքական պայմաններում Հայաստանի անվտանգության ապահովման, գոյատևման ու հետագա զարգացման հուսալի պայմանը ոչ միայն սեփական ուժերի վրա հենվելն է, այլ նաև մեր դարավոր ու փորձված բարեկամի՝ Ռուսաստանի հետ տնտեսական, քաղաքական ու ռազմական դաշինքի մեջ լինելը, հանգամանք, որը էլ ավելի կամրապնդի Հայաստանի անկախությունը և Հանրապետությունը կմնա միջազգային իրավունքի սուբյեկտ, ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և միջազգային այլ կազմակերպությունների անդամ:

Հանրագումարի բերելով Ֆադեյ Սարգսյանի գրքի արժանիքները, համարձակորեն կարելի է ասել, որ հեղինակի հուշերը գաղափարական, քաղաքական ու գործնական նշանակություն ունեն հայրենիքի հզորացման ու բարգավաճման, ներկա և գալիք սերունդներին ջերմ հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում:

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ